

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Եվս մեկ կոթող-հուշարձան բարձրացավ Մայր Աթոռի տարածքում: Քարակերտ բերդապարիսպ հիշեցնող հուշասյան վրա երկրագնդի արտաքանդակն է և համայն աշխարհի երկրներում սփռված հայության գլխավերևում՝ պահապան Ս. Էջմիածինը: Խորհրդալից այս հաշուրձանը (հեղինակ՝ ճարտարապետ Բաղդասար Արզումանյան, կատարող-քանդակագործ՝ Էդիկ Հակոբջանյան) հավերժացնում է հիշատակը լոնդոնահայ լուսաբնակ տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների:

Հոկտեմբերի 1-ին, հուշարձանի բացման առթիվ, Վեհափառ Հայրապետը արտասանեց հետևյալ խոսքը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:
«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:
Սիրելի միաբան եղբայրներ, սիրելի ժողովուրդ,
Հավաքվել ենք այստեղ՝ օրհնելու համար հիշատակը Մայր Աթոռիս բարերարների լոնդոնաբնակ Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների, որոնց հիշատակին կառուցվեց այս գեղեցիկ հուշարձանը, որ կոչվում է Ս. Էջմիածին—Սփյուռք հուշարձան: Գաղափարը իմը չէ, գաղափարը Ջորջ և Ջոնի Քյուրքճյաններինն է՝ զավակները լուսաբնակ Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների, որոնք ծախսերը հոգացին այս կառույցին: Հուշարձանը, ինչպես տեսնում եք, հայկական հարազատ ոճով է կառուցված, հայրենաբնակ ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի տաղանդով, որ ներկա է այստեղ:

Այս պահը մի հուզիչ, մի պատմական պահ է՝ հիշելու հանգուցյալ Սարգիս և Աստղիկ Քյուրքճյաններին: Մոտ քառասունհինգ տարիներ ա-

ռաջ, երբ Էջմիածնում տեղի էր ունենում հանգուցյալ Գևորգ Զ կաթողիկոսի ընտրությունը և օծումը, ես, իբրև երիտասարդ վարդապետ և պատգամավոր, Ռումինիայից եկել էի Հայաստան՝ մասնակցելու այդ սրբազան արարողությանց: Պատերազմից հետո էր, ահավոր պատերազմից հետո, որ, բարեբախտաբար, հաղթանակով էր վերջացել: Գուցե մեր պատմության մեջ առաջին անգամը լինելով, մեր շուրջը պատերազմներ տեղի ունեցան, բայց Մայր Հայաստանի հողի վրա տեղի չունեցավ ոչ մի արյունահեղություն: Հեռու մնաց պատերազմը մեր հայրենիքեն: Ահա այդ ուրախությամբ հավաքվել էին ներկայացուցիչներ համայն Սփյուռքից, նաև Հայաստանից բնականաբար՝ կատարելու համար ընտրությունը նոր կաթողիկոսի: Բոլոր երկրներից հայեր եկել էին: Ինձ համար, իբրև ռումինահայ, որ կյանքումս երբեք ճանապարհորդած չէի և ծանոթ չէի Սփյուռքին, առաջին անգամ լինելով իմ կյանքում, հանդիպեցի հայերի, որոնք տարբեր երկիրներից էին գալիս: Այս փորձառությունը չափազանց հետաքրքրական էր և հուզիչ: Արտասահմանյան պատգամավորների մեջ կար մի անձնավորություն, այն ատեն բավական երիտասարդ, աշխույժ, եռանդով ու խանդավառությամբ լեցուն, վերացած Էջմիածնի հմայքով և խորհուրդով, որ ամեն միջոցառումի մասնակցում էր բացառիկ ուրախությամբ և քրիստոնեական հոգևոր ապրումներով: Այդ անձնավորությունը այժմ լուսաբնակ Սարգիս Քյուրքճյանն էր, որին առաջին անգամ ծանոթանալու առիթը ունեցա: Այդ օրից մինչև իր կյանքի վերջին օրը նա մնաց հավատարիմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ծառայելու ուխտին: Նա ոչ մեկ այլ կազմակերպություն չէր գնահատել այնքան, ինչպես Ս. Էջմիածինը: Նա նույնիսկ մի քիչ հպարտությամբ ասում էր՝ «Ես ոչ մեկ կուսակցության չեմ պատկանիր, ես մեկ կուսակցություն ունիմ՝ Հայաստանյայց Եկեղեցին և Ս. Էջմիածինը»: Նա այսպես ապրեց ու գործեց ամբողջ իր կյանքի ընթացքում՝ հանդիսանալով Մայր Աթոռի բացառիկ նվիրատուներից մեկը, անձամբ ինք և իր կողակիցը՝ բարեհոգի տիկին Աստղիկը: Սարգիս Քյուրքճյան ամեն եկեղեցական շինարարական աշխատանքների առիթով իր կարևոր լուման դրեց՝ ի պայծառություն Մայր Աթոռիս և հայրենի սրբավայրերի: Հիմա նրանք չկան, բայց նրանց որդիները՝ Զորջը և Զոնին, հարազատ զավակները մնացին իրենց ծնողաց, նաև Էջմիածնասիրության և եկեղեցաշինության առումով: Թե՛ Զորջը, թե՛ Զոնին նույն ոգով, նույն հավատավոր զգացմունքներով օգտակար են լինում Մայր Աթոռիս և Հայաստանի եկեղեցական կյանքի վերաշինության:

Եվ ահա, Զորջին գաղափարն էր, որ այսպիսի հուշարձան կառուցվի այստեղ՝ իբրև խորհրդանիշ Էջմիածին—Սփյուռք հայության միասնության՝ մեկ Եկեղեցի, մեկ ժողովուրդ, մեկ մայր հայրենիք նշանաբանով: Ուր որ էլ ապրեն հայերը արտասահմանի կյանքի պայմանների մեջ, տարբեր երկրներում, տարբեր երկինքների տակ, տարբեր ազդեցությունների ներքև՝ թե՛ մշակութային, թե՛ ընկերային, թե՛ քաղաքական, ամեն հայ մարդ ցանկալի է, որ մնա հավատարիմ քաղաքացի իր բնակած երկրների, բայց միաժամանակ կրոնական զգացումների ճանապարհով կապված մնան իրենց Մայր Եկեղեցուն, իրենց Մայր Եկեղեցու հավիտենական կենտրոն աստվածակառույց Ս. Էջմիածնին: Ոչ մի կազմակերպություն հայկական, ուր էլ որ գտնվի, չի կարող հասնել Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Եկեղեցվո բարձունքին, աստվածահիմն հաստատություն, որ 1700 տարիներից ի վեր հսկում է մեր ազգի բախտի վրա, մխիթարում է, լուսավորում է



ՀԱՅԵՐԵՎԱՆ-ԹԱՅԱՌԱՆ ՀԱՏԵՍՐՊՍԿԻ ՊԱՀԵՎ
(1 հոկտեմբեր 1989 թ.)

նրան և ճանապարհ է բացում հոգիների փրկության՝ միշտ անբաժան ժողովրդից ու մայր հողից: Ահա ինչ է նշանակում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի, որի կենտրոնում ենք գտնվում: Եվ այս պատմական կենտրոնի սրտի վրա բարձրանում է նաև հուշարձանը՝ որպես խորհրդանիշ բոլոր մեր ապրումների, բոլոր մեր զգացմունքների, բոլոր մեր երազանքների:

Թող Աստծո կենարար Աչը միշտ հովանի մնա մեր ազգի վրա ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի, թող Աստված օգնի մեր ազգին, որպեսզի նա կարողանա հաղթահարել մերօրյա դժվարություններն ու տառապանքները և մոտ ապագային դիմավորել նոր արշալույս:

Մաղթում եմ նաև, որ Աստված անշարժ և անսասան պահի Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որի տարածքի վրա փառավորվում է նաև այս հուշարձանը: Եվս առավել մեր աղոթքն է որ Տերը պահի, պահպանի քաջառողջ, արևշատ տարիներով տեր և տիկին Ջորջ Քյուրքճյանները, տեր և տիկին Ջոնի Քյուրքճյանները՝ իրենց ընտանեկան պարագաներով, և մենք կարողանանք նաև հետ այսու ավելի երջանիկ առիթներով հանդիպել և միասին աղոթել Մայր տաճարում և միասին խոնարհվել այս հուշարձանի առջև, որ պիտի պահպանի հավիտյան հիշատակը Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» այժմ և հավիտյանս, ամեն:

Այսպես խոսք առավ հանգուցյալների որդին՝ պրն. Ջորջ Քյուրքճյանը, և հուզախառն հայերենով շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին և ներկաներին՝ իրենց ծնողների հիշատակը հարգելու համար: Պրն. Քյուրքճյանը պատրաստակամություն հայտնեց շարունակելու ծնողների գործը և միշտ լինելու Վեհափառ Հայրապետի կողքին՝ Նորին Սրբության հայրենաշեն ծրագրերը իրականացած տեսնելու համար:

ԹՂԹԱԿԻՑ